

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05**  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

**30.03.2011թ.**

**ժ.11: 00**

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Գավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Գ. Հովսեփյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ):

**Օրակարգի նախագծում՝ երկու հարց.**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների (2010 թվականն որպես բազիսային տարի) հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների (2010 թվականն որպես բազիսային տարի) հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/

**Որոշեցին՝**

հաստատել 2011 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար նոր սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի) և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային տարի սահմանել 2010 թվականը:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ